Մրցույթ՝ ՀՀ Տավուշի մարզի «Այգեձորի միջն. դպրոց» ՊՈԱԿ-ի անգլերեն (6 դասաժամ/, քիմիա (10 դասաժամ), Ռուսաց լեզու (4 դասաժամ) Ֆիզկուլտուրա(4 դասաժամ), կերպարվեստ (3 դասաժամ) , երաժշտություն (3 դասաժամ) , Արվեստ 7 դասաժամ) հանրահաշիվ(11 դասաժամ), երկրաչափություն(6 դասաժամ) մաթեմատիկա(5 դասաժամ) առարկաների ուսուցչի թափուր տեղ/երի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սեպտեմբերի– 20-ից մինչև հոկտեմբերի 4--ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 14:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2023 թ հոկտեմբերի 6--ին՝ ժամը 12:00-ին**, Այգեձորի միջն. դպրոցում, հասցե՝ Տավուշի մարզ, գ. Այգեձոր 7-րդ փողոց, 2-րդ նրբ, 1-ին շենք-: Տեղեկությունների համար զանգահարել 077277947 հեռախոսահամարով: